ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/259

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն Է. Փոթոյանի (պետական ռեգիստրի գրանցման վկայական թիվ 273.110.1135298),

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Ա. Եղիազարյանի (լիազորագիր տրված՝ 21.12.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.12.2020թ. թիվ 26/26-1/18432-2020 գրությամբ «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 08.12.2020թ. թիվ 01/10-293 գրության հիման վրա 11.12.2020թ. թիվ 26/26-1/18432-2020 գրությամբ նախաձեռնել է «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին (հետայսու

նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/259 ընթացակարգի շրջանակներում 21.12.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր տնօրենի մասնակցությունը, ով նիստի ընթացքում հայտնել է, որ հաստատված պայմանագիրը և պայմանագրի ու որակավորման ապահովումները՝ կից գրությամբ 03.12.2020թ.՝ ժամը 17:00-20:00-ի սահմաններում Ընկերության աշխատակցի կողմից ներկայացվել են «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ընդունարան:

Այնուհետև՝ 23.12.2020թ., ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սույնով հաստատում ենք, որ համաձայն պատվիրատուի ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/95 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի հրավերով սահմանված կարգի 10 աշխատանքային օրվա ընթացքում, ավելի հստակ 2020թ-ի դեկտեմբերի 3-ին մեր կողմից, որպես ընտրված մասնակից ստորագրվել է պայմանագիրը (2 օրինակից՝ համաձայն պատվիրատուի ծանուցմանը) և ներկայացվել է որակավորման և պայմանագրի ապահովումը պատվիրատուին համաձայն հրավերով նշված պատվիրատուի տվյալների՝ մեջբերում հրավերից՝ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ, որը գտնվում է ք. Երևան, Ֆանարջյան 76շ. հասցեում և համաձայն պայմանագիր կնքելու ծանուցումով նշված տվյալների մեջբերում ծանուցումից՝ անհրաժեշտ է ներկայացնել «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ, հասցե՝ Ֆանարջյան 76:

Նաև համաձայն նախնական նիստում Ձեր հարցմանը վերաբերյալ ժամանակային հատվածին, ճշտեցինք մեր ներկայացուցչի հետ և նորից կրկնում ենք մանրամասը նրա բառերից, որ ստորագրված պայմանագիրը 2 օրինակից և որակավորման և պայմանագրի ապահովումը ուղեկցող գրությունով ներկայացվել է պատվիրատուին տրված տվյալներով՝ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ, հասցե՝ Ֆանարջյան 76, 2020թ-ի դեկտեմբերի 3-ին ժամը 18:00-ից հետո, ըստ նրա բառերի հստակ չի հիշում ժամը քանիսին, հարցին լույս էր թե մութ էր, պատասխանեց, որ մութ էր,

և դա կարող էր լինել ժամը 19:00, 20:00, 21:00, 22:00, 23:00-ի կողմերը, բայց ոչ ուշ քան 23:59:

Ըստ ներկայացուցչի բառերի պատվիրատուի աշխատակիցը մեր ներկայացուցչից չի վերցրել վերոնշված փաստաթղթերը՝ ուղղորդելով նրան գալ հաջորդ օրը:

Հարկ ենք համարում այստեղ հստակ արձանագրել, որ պատվիրատուի հրավերի մեջ, ինչպես նաև պայմանագիր կնքելու ծանուցման մեջ որևէ կերպով ու ձևով նշված չէ թե պատվիրատուի որ աշխատակցին, նշված հասցեի որ հատվածում կամ որ համարի սենյակում, օրվա մինչև որ ժամն է սահմանվում ներկայացնել: Ուստի մարդկանց մոտ ստեղծվում է տպավորություն, որ անգամ կարող է ներկայացվել գլխավոր բժշկին վիրահատության ժամանակ:

Շարունակելով ներկայացուցչի տրված տեղեկությունը՝ համաձայն պատվիրատուի աշխատակցի ուղղորդմանը, հաջորդ օրը, դեկտեմբերի 4-ին՝ դեկտեմբերի 3-ին ստորագրված պայմանագիրը (2 օրինակից) և որակավորման և պայմանագրի ապահովումը երկրորդ անգամ է ներկայացնում պատվիրատուին տրված տվյալներով՝ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ, հասցե՝ Ֆանարջյան 76: Ներկայացնում է ժամը 18:00-ից հետո, ըստ նրա բառերի հստակ չի հիշում ժամը քանիսին, հարցին լույս էր թե մութ էր, պատասխանեց, որ մութ էր, և դա կարող էր լինել ժամը 19:00, 20:00, 21:00, 22:00, 23:00-ի կողմերը, բայց ոչ ուշ քան 23:59:

Ըստ ներկայացուցչի բառերի պատվիրատուի աշխատակիցը ընդունել է փաստաթղթերը:

Բոլոր բերված փաստերը պետք է ֆիքսված լինեն պատվիրատուի Ֆանարջյան 76 հասցեի տարբեր հատվածներում գտնվող տեսանկարահանող սարքերով, ինչպես նաև հնարավոր այլ տարբերակներով:

Սակայն առ այսօր և նախորդ նիստին նույնպես պատվիրատուն պնդում է, որ իր մոտ չի իրեն հանձնված վերոնշված փաստաթղթերը, մասնավորապես 2020թ-ի դեկտեմբերի 3-ին ստորագրված և դեկտեմբերի 3-ին ներկայացված և պատվիրատուի կողմից դեկտեմբերի 4-ին ընդունված պայմանագիրը 2 օրինակից և որակավորման և պայմանագրի ապահովումը ուղեկցող գրությունով:

Ուստի ևս մեկ անգամ հորդորում ենք պատվիրատուին արդարացի գտնվել, չզլանալ և հանել իր փաստաթղթերի միջից դեկտեմբերի 3-ին ներկայացված, դեկտեմբերի 4-ին իր կողմից ընդունված փաստաթղթերը և արձանագրել այն փաստը, որ փաստաթղթերը

գտնվում են իրենց մոտ, սակայն ինչ-ինչ պատճառներով՝ օբյեկտիվ թե սուբյեկտիվ չեն ընդունվում, և ոչ թե պնդել, որ իրենց չի ներկայացվել կամ չեն ստացել:

Միևնույն ժամանակ հարկ ենք համարում նաև տեղեկացնել (չնայած և չունի որևէ իրավական նշանակություն), որ գների նվազեցման բանակցությունների ընթացքում, որին այլ մասնակից չի մասնակցել, նվազեցրել ենք թիվ 17 և 19 չափաբաժինների գները մինչև նախահաշվային գներ: Պատվիրատուի խնդրանքով նվազեցրել ենք նաև թիվ 1 չափաբաժնի գինը, որպեսզի մրցույթը կայանա նաև այդ չափաբաժնով: Ուստի չկա իմաստ մի քանի օր անց չներկայացնել պայմանագիր»:

3. <u>«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.12.2020թ. թիվ 01/10-293 գրությամբ հայտնել է, որ իր կարիքների համար դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՈւԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/95» ծածկագրով գնման ընթացակարգ, որի շրջանակներում «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ն (1,4,17,19 չափաբաժիններով) ճանաչվել է ընտրված մասնակից:

Անգործության ժամկետը լրանալուց հետո՝ 19.11.2020թ., Պատվիրատուն պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցումը և պայմանագրի նախագիծը ներկայացրել է Ընկերությանը, սակայն, վերջինս սահմանված ժամկետում՝ մինչև 03.12.2020թ. չի ներկայացրել հաստատված պայմանագիրը և պայմանագրի ու որակավորման ապահովումները: Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը, «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 21.12.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրվածը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/259 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/259 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն

հետևյալ փաստերը.

1. «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՈւԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/95» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 05.11.2020թ. նիստի ընթացքում որոշում է կայացվել «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին, 4-րդ, 17-րդ և 19-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 19.11.2020թ. mda.trade@yandex.ru էլեկտրոնային փոստի միջոցով «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

4. «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.12.2020թ. թիվ 01/10-293 գրությամբ հայտնել է, որ սահմանված ժամկետում՝ մինչև 03.12.2020թ. չի ներկայացրել հաստատված պայմանագիրը և պայմանագրի ու որակավորման ապահովումները, ուստի վերջինս զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.12.2020թ. թիվ 26/26-1/18432-2020 գրությունը, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 08.12.2020թ. թիվ 01/10-293 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,</u>

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:

Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

12) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

13) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***<u>ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:</u>***

Այսպես, «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների

ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/95» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 05.11.2020թ. նիստի ընթացքում որոշում է կայացվել «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին, 4-րդ, 17-րդ և 19-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 19.11.2020թ. mda.trade@yandex.ru էլեկտրոնային փոստի միջոցով «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

«Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.12.2020թ. թիվ 01/10-293 գրությամբ հայտնել է, որ սահմանված ժամկետում՝ մինչև 03.12.2020թ. չի ներկայացրել հաստատված պայմանագիրը և պայմանագրի ու որակավորման ապահովումները, ուստի վերջինս զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 9.3-րդ, 9.4-րդ և 9.5-րդ ենթակետերի համաձայն՝

9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում՝ պայմանագրում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

9.4 Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

9.5 ***<u>Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:</u>***

Ընդ որում՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի

կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:</u>***

Այսպիսով՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է հստակ ժամկետ պայմանագիրը ստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու համար, որոնք չպահպանելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ինչ վերաբերում է Ընկերության տնօրենի այն հայտարարությանը, որ Ընկերության աշխատակցի կողմից հաստատված պայմանագիրը և պայմանագրի ու որակավորման ապահովումները՝ ***<u>կից գրությամբ 03.12.2020թ. ժամը 17:00-20:00-ի սահմաններում ներկայացվել են ընդունարան</u>***, ապա հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Ընկերության կողմից արված հայտարարության իսկությունը պարզելու նպատակով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից Պատվիրատուին ներկայացվել է պահանջ ***<u>03.12.2020թ. 17:00-20:00-ն ընկած ժամանակահատվածի տեսաձայնագրությունները տրամադրելու վերաբերյալ</u>***:

Պատվիրատուի կողմից տրամադրվել են պահանջված տեսաձայնագրությունները, որից հետո ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը դրանք 24.12.2020թ. տրամադրել է Ընկերության տնօրեն Է. Փոթոյանին՝ թիվ ԲՔԱ-ԳՆ/2/19499-20 կից գրությամբ, հետևյալ բովանդակությամբ.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում քննվող ***<u>ՍՑ-ՆԳ-2020/259</u>*** և ՍՑ-ՆԳ-2020/261 ընթացակարգերի քննության նպատակով հրավիրված նիստերի ընթացքում Դուք հայտնել եք, որ հաստատված պայմանագրերը և պայմանագրի ու որակավորման ապահովումները՝ կից գրությամբ, Ընկերության աշխատակցի կողմից 03.12.2020թ. ներկայացվել են «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ընդունարան:

Ձեր կողմից արված հայտարարության իսկությունը պարզելու նպատակով Պատվիրատուի կողմից տրամադրվել է «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի մուտքի պահպանված 03.12.2020թ. տեսաձայնագրությունը:

Ձեզ է ներկայացվում Պատվիրատուի կողմից տրամադրված տեսաձայնագրությունը՝ ուսումնասիրության:

Անհրաժեշտ է ուսումնասիրության արդյունքում մատնանշել աշխատակցի «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ մուտք գործելու փաստը և ժամը, միևնույն ժամանակ, եթե առկա են Ձեր կողմից արված հայտարարությունը հիմնավորող այլ փաստեր և ապացույցեր՝ ներկայացնել»:

Ի պատասխան նշված գրության, տեսաձայնագրությունների ուսումնասիրությունից հետո՝ 24.12.2020թ. Ընկերության կողմից ներկայացվել է դիրքորոշման լրացում, հետևյալ բովադակությամբ.

«Ձեր կողմից 24.12.2020թ-ին մեզ տրամադրված տեսաձայնագրությունների ուսումնասիրության արդյունքում կարող ենք արձանագրել հետևյալ փաստերը.

1. Պատվիրատուի կողմից 2020թ-ի դեկտեմբերի 4-ի տեսաձայնագրությունից տրամադրվել է ընդամենը մոտ 6 րոպե տեսաձայնագրություն՝ միայն այն հատվածը, որտեղ երևում է թե ինչպես է մեր ներկայացուցիչը փաստաթղթերը ներկայացնում պատվիրատուին:

Հետևաբար հստակ կարող ենք ֆիքսել, որ պատվիրատուն ճանաչում է մեր ներկայացուցչին և կարելի է ենթադրել, որ տեսաձայնագրությունները տրամադրվել են ընտրողաբար:

2. Հստակ ապացուցվում է, որ պատվիրատուի այն պնդումները, որ ստորագրված պայմանագիրը 2 օրինակից և որակավորման և պայմանագրի ապահովումը ուղեկցող գրությունով իրենց մոտ չի, մեղմ ասած սխալ ինֆորմացիա է:

3. Պատվիրատուի կողմից 2020թ-ի դեկտեմբերի 3-ի տեսաձայնագրությունները

տրամադրված են մինչև ժամը 21:00-ն:

Խնդրում ենք պատվիրատուից պահանջել և ստանալ 2020թ-ի դեկտեմբերի 3-ի 21:00-ից մինչև 23:59-ը ընկած ժամանակահատվածի տեսաձայնագրությունները ևս, որտեղից էլ հստակ կերևա, որ մեր ներկայացուցիչը ստորագրված պայմանագիրը 2 օրինակից և որակավորման և պայմանագրի ապահովումը ուղեկցող գրությունով ներկայացվել է պատվիրատուին տրված տվյալներով՝ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ, Ֆանարջյան 76 հասցեով:

4. Պատվիրատուի այն պնդմանը, որ ավելի ուշ ժամի ձայնագրությունները չեն պահպանվել, նույնպես զուրկ է հիմնավորումից, քանի որ տեխնիկական ձայնագրող սարքերի աշխատանքային սկզբունքը այն է, որ անբավարար հիշողության դեպքում նոր ձայնագրությունները կատարվում է ավելի վաղ ձայնագրությունների վրա, հետևաբար, եթե տրամադրվել է դեկտեմբերի 3-ի մինչև ժամը 21:00-ի տեսաձայնագրությունները, ապա ավելի ուշ ժամի կատարված ձայնագրությունները չէին կարող չպահպանվել:

Ուստի, ինչպես Դուք ևս համոզվեցիք, ևս մեկ անգամ պնդրում ենք մեր բառերի ճշմարտացիությունը:

Հիմա արդեն հստակ ապացուցված է, որ ստորագրված պայմանագիրը 2 օրինակից և որակավորման և պայմանագրի ապահովումը ուղեկցող գրությունով պատվիրատուի մոտ է:

Այսպիսով ևս մեկ անգամ հորդորում ենք պատվիրատուին արդարացի գտնվել, չանել մեր կազմակերպության հանդեպ ապօրինի գործողություններ, չզլանալ և հանել իր փաստաթղթերի միջից դեկտեմբերի 3-ին ներկայացված, դեկտեմբերի 4-ին իր կողմից ընդունված փաստաթղթերը»:

Այսպիսով՝ հարկ եմ համարում արձանագրել, որ Ընկերության կողմից արված հայտարարությամբ և ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչվել են իրարամերժ փաստեր, այն է՝ նիստի ընթացքում Ընկերության տնօրենը հայտնել է, որ հաստատված պայմանագիրը և պայմանագրի ու որակավորման ապահովումներն Ընկերության աշխատակցի կողմից «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ընդունարան ներկայացվել են 03.12.2020թ.՝ ժամը 17:00-20:00-ի սահմաններում, այնուհետև տեսաձայնագրությունները ուսումնասիրելուց հետո ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից 2020թ-ի դեկտեմբերի 3-ի տեսաձայնագրությունները տրամադրված են մինչև ժամը 21:00-ն և խնդրել պատվիրատուից պահանջել և ստանալ 2020թ-ի դեկտեմբերի 3-ի 21:00-ից մինչև

23:59-ն ընկած ժամանակահատվածի տեսաձայնագրությունները:

Այսինքն՝ Ընկերությունը, ոչ միայն չի կարողացել մատնանշել թե 03.12.2020թ. իր կողմից հայտնած ժամանակահատվածում՝ 17:00-20:00-ն ընկած ժամանակահատվածում, կոնկրետ որ ժամին է իր իսկ աշխատակիցը ներկայացրել պայմանագիրը և պայմանագրի ու որակավորման ապահովումները, այլ նաև չի ներկայացրել, որևէ փաստական տվյալ ի հիմնավորումն իր կողմից արված հայտարարությունների, ուստի գտնում եմ, որ Ընկերության կողմից արված հայտարարությունները որևէ կերպ ապացուցված չեն և չեն կարող ազդել Ընթացակարգի ելքի վրա:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ գտնում եմ, որ ««Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ» ՍՊԸ-ն հրաժարվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/95-1» ծածկագրով պայմանագիրը կնքելուց և թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, որի հետևանքով զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.12.2020թ. թիվ 26/26-1/18432-2020 գրությամբ «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էմ Դի Էյ Թրեյդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**